

Կոյս Մարիամ Եգիպտոս փախչելու ատեն դժուարու-
թիւններու յաղթելով՝ յոգնաբեկ կը նստի եղիսպակի
մը թուփին տակ, և անկէ փրցուած տերեւներէն փունջ
մը շինելով կը սրբէ իր ճակատը, և երբ կը զովանայ
կ'օրհնէ նոյն տունկը՝ որպէսզի աւելի նոր յատկու-
թիւններ ունենայ անիկա (Han. F. էջ 287):

Լոտասը (Lizyphus Spina Christi) նուիրական բոյս
մըն է: Ան յաճախ ցոյց կուտայ զանազան գիւղերու
սահմանները և ոմանք ալ կը հաւատան թէ զբախտին
չըջապատի ցանկը անով շինուած է: Երբ լոտասի ծառ
մը իր քառասուն տարիքին կը հասնի՝ ո՛ր և է մեռնող
սուրբի մը բնակարանը կ'ըլլայ: Շատ անգամ վտան-
գաւոր բան մըն է այդ տարիքին մէջ լոտասի ծառ մը
կտրելը, վասնզի սուրբը կրնայ իմանալ մահը: Պա-
ղեստինի մէջ յաճախակի կարելի է պատահիլ նուի-
րական ծառերու խումբերուն, ոչ միայն ի հարկէ լո-
տասներուն՝ որոնց կ'այցելեն սուրբ մարդոց հոգիները
և մասնաւորապէս հինգշաբթի իրիկունները կը տես-
նուի որ անոնցմէ ոմանք լուսաւորուած են և կրնան
լսելի ընել իրենցմէ բղխած երաժշտական նուիրական
զործիքներու շեշտերը, մինչ լոյսերը կը թուին թէ
ծառէ ծառ լուսաշող կ'երևան: Ասիկա նշան է թէ
սուրբերը կը պահեն տօները եւ այցելութիւններ կը
փոխանակեն: Եթէ հովոտ գիշեր մը այս ծառերուն
քովէն անցնիք և ուշադրութիւն ընէք, երբեմն որոշ
կերպով պիտի լսէք «Աստուծոյ» սուրբ անունը ճիւ-
բերուն մէջէն: Ընդհանրապէս կ'ըսուի թէ Ս. Ծննդե-
ղեան գիշերը ծառեր և բոյսեր, մասնաւորապէս Յոր-
զանանի եզերքը գտնուածները կ'երկրպագեն Փրկի-
չին . . . (Han. F. էջ 287-289):

ժ) Յորդանանի ցուրը. — Ամէն տարի Ս. Ծննդեան